



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

1. Հին եւ նոր Երեւանը

Իմ մանկությունը, Թյուրքիայում, պուգադիպել է Սուլթան Աբդուլ Համիդի բռնապետական շրջանին: Այդ շրջանում «Հայաստան» բառն արտասանողները պատ. ժրվում էին բանտով, արքայով, կախաղանով: Այս էր պատճառը, որ հայ ժողովրդի պատմության դասը մեղ ավանդվում էր զաղումին:

Զեմ հիշում, թե ո՛վ էր հեղինակը, բայց հիշում եմ, որ մեր հայոց պատմության դասագիրքը կոչվում էր «Գուլիստան» («Արդաստան»): Դասավանդությունն ավարտելուց հետո, դասատուն ինձ էր վստահում «Գուլիստան»ի պահպանությունը: Եվ ես, դասագիրքը մի հատուկ գրիտնկայի (մոմլաթի) մեջ փաթաթելուց հետո, տանում պահում էի մեր տնամերձ պարտեզը շրջափակող ջուր պատի մի խողովում, առանց նշմարվելու որե՛կ մեկի կողմից:

Այսօր... այդ ժամանակաշրջանից հիսուն տարի անց, ես ազատորեն ման եմ գալիս Երեւանում՝ Սովետական Հայաստանի մեղ գեղեցիկ մայրաքաղաքում:

Հին Երեւանը, մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, եղել է

մի գյուղատիպ քաղաք հողաշեն ցածրիկ տնակներով, փողեցից նեղիկ փողոցներով ու ջերմի բույն ձախձախություններով, որոնց մասին գուսան Նաղաշ Հովնաթանն անգլա՝ ախպես է արտահայտվել իր «Գովասանություն» Երեւան քաղաքին» բանաստեղծությունում:

«Հավեն միաս որպես ըղհուր,
Ջերմ և կանաչ աղտեղի ջուր»:

Նոր Երեւանը հույկապ է իր լաթնարձակ արդյունքներով, գեղատեսիլ ծառուղիներով, սառնաջուր ցալաղբյուրներով, ընդարձակ հրապարակներով, կանաչափետ պուրակներով, ծաղկածիժաղ զբոսայգիներով, ճարտարապետական նորարվեստ կոթողներով, ուսման, գիտության, գեղարվեստի հատուկ շենքերով ու բլրազարդ համայնապատկերով:

Որպես արտասահմանից նոր ժամանած հայրենադարձ, առանց չափազանցության կարող եմ ասել, որ Երեւանը անհամեմատորեն շատ ավելի մեծ, ավելի գեղեցիկ է, քան Լիբանանի մայրաքաղաք Բեյրութը:

Բեյրութում գործածված շինանյութերի հիմքը ցեմենտն է: Շենքերում՝ հարազատ ո՛չ մի ճարտարապետական ոճ, քաղաքում՝ ո՛չ մի լաթն արդյունա, ո՛չ մի ընդարձակ հրապարակ, ո՛չ մի գեղարվեստական քանդակ: Ամենանշանավոր հրապարակը, որտեղ թյուրքերի կողմից կախաղան են բարձրացվել (1914—1918 թ. թ.) Լիբանանի անկախության համար պայքարող հայրենասերները, կոչվում է Բուրջ: Սպասվում էր, որ հին կառավարատան շենքի քանդումից հետո, Բուրջը գեղազարդվեր և վերածվեր Լի-


1. «Ելմիածին» ամսագրի 1952 թվականի ապրիլ ամսի համարում տեղադրված իմ հոդվածը վերնագրված էր «Ուլետրի տպավորություններ Բեյրութից Երեւան»: Հասած լինելով Երեւան և ծանոթանալով մեղ գեղեցիկ մայրաքաղաքի հետ, ցանկանում եմ շարունակել տպավորություններս նոր խորագրի տակ՝ «Երեւանյան տպավորություններ»։— Մ, Հ, 1

բանանի հերոսներին արժանավայել մի հրապարակի, բայց այդպես չեղավ, այլ դարձավ ամերիկյան զանազան մարկաների պատկանող ավտոների մի կանգառ:

Նրեանում, ընդհակառակը: գրանիտից և վարդագույն, նարնջագույն, կարմիր ու սպիտակ տուֆ քարերից կառուցված յուրաքանչյուր շենքի ճակատում, լայնաձիգ պողոտաներում, ընդարձակ հրապարակներում և զբոսայգիներում դուք անպայման կհանդիպեք հայ ճարտարապետական հարազատ ոճի, գեղարվեստական մի հրաշալիքի, զարդ լինի այն թե բարձրագույն նկար: Իհարկե,

վրա, հայ ժողովուրդը, որպես հավերժական կոթող իր անկեղծ երախտագիտության, կառուցել է այս փառահեղ մոնումենտ-քանդակը, որի վրա վեհորեն կանգնած է աշխարհի խաղաղության և ժողովուրդների միջբայրության մշտաթիուն պահապան ու անվեհեր պաշտպան մեծ Ստալինը:

Մեծ առաջնորդի և իմաստուն ուսուցչի մոնումենտը և լենինի շքանշանակիր Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Պետական օպերայի և բալետի շենքը երկու վեհություններ են, որոնք երևում են քաղաքի բոլոր ծայրամասերից: Իսկ Ստալինյան պողո-



Մի տեսարան Այգեստան փողոցից

քաղաքում դեռ կան հին մնացորդներ, սակայն նրանք ժամանակավոր են, անցողիկ, այսօր վաղը նրանք ևս կբանդվեն, տեղ տալով սնկի նման բռանող նոր շենքերի:

Եվ Նրեանի այս գեղեցկության, մեծության և վեհության մեջ մեծ դեր ունեն և՛ բնությունը, որ նրան տվել է հրաշալի օդ և պանծալի ջուր, և՛ սովետական ստեղծագործ միտքը, որ հղացել է ճարտարապետական ու գեղարվեստական սքանչելիքներ, և՛ հայ աշխատավորի ճարտարագործ ձեռքը, որ իմացել է կյանք ու կենդանություն դրուշմել գրանիտին ու տուֆ քարերին:

Քանաքեռի կանաչազարդ մեկ սարալանջի

տալի վրա շուտով կավարտվի երրորդ վեհությունը՝ Պետական մատենադարանի 18 մետր բարձրությամբ նոր շենքը ճարտարապետ Մ. Գրիգորյանի նախագծով, հայ գրերի գտիչ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի, պատմահայր Մովսես Խորենացու, ոսկեգրիչ Նղիշի, գիտնական Անանիա Շիրակացու և ուրիշների արձաններով:

Եթե Ստալինի մոնումենտ-քանդակը քաղաքի դիմամասումն է, Քանաքեռի ուղղությամբ գտնվող բարձունքի վրա, ապա քաղաքի կենտրոնական հրապարակում բարձրամետ ևն Կառավարական տան հույակապ շենքը, Կոպտուրայի գեղակերտ պալատը,

«Արարատ» տրեստի կոթողային շենքը, Կապի շենքին կից ՀԱՄԽ-ի (Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի) կամարակապ շենքը և նոր հյուրանոցի հո-

յակապ շենքը (վերջին երկու շենքերը կառուցման ընթացքի մեջ են գտնվում), որոնք Լենինի հրապարակի շրջագծի անդուգական զարդերն են:

2. ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԴԸ

Շինարարական աշխատանքները բոլոր թափով առաջ են տարվում նաև դեպի Կառուչի ճարտարարվեստական թաղամասն երկարող տրամվայի գծի աջ կողմում, որտեղ ման գալիս, ես հազիվ թե նշմարեցի Երեւանի հին բերդի մնացորդները: Այդ կամի ու հասարակ քարերի կույտերն ինձ հիշեցրին անցյալում պարսիկ խանության շրջանին վերաբերող պատմության մի քանի դժբաղանքներ:

Ինչպես նշվում է ՍՍՌՄ-ի պատմության դասագրքում, 1802 թվականին, Ալեքսանդր I ցարի օրով, Անդրկովկասի գլխավոր հրամանատար նշանակվեց Ցիցիանովը, որը Ռուսաստանի միացնելուց հետո Մենգրելիան, Գուրիան և Իմերեթիան, 1804 թվականին ձեռնարկեց ռազմական գործողություններ Երևանի պարսիկ խանության դեմ:

Այդ արշավանքի ընթացքում էր, որ ցարական զորքերը պաշարեցին Երևանի սատրապանիստ բերդը, որը երկու ամիս պաշարելուց հետո Ցիցիանովն ստիպված եղավ նահանջել:

Ցարական զորքերի այս ժամանակավոր նահանջը պատճառ էր եղել, որ Երևանյան խանության սարդարը հպարտանա իրեն այցելած արևմտա-եվրոպական ճանապարհորդների առջև: «Եթե, — ասել է սարդարը, — Եվրոպայի երեք կամ չորս թագավորները միանան այս բերդը գրավել փորձելու համար, նրանք լավ կանեն հրաժարվելով այդ դադափարից, որովհետև նրանց ջանքերն իզուր պիտի անցնեն»:

Սակայն պարսիկ սարդարի այս խրոխտանքը հիմք չունի, որովհետև 1827 թվականի գարնանը, Կովկասյան բանակի հրամանատար նշանակված Պասկևիչը ջախջախեց պարսկական բանակը և շատ հեշտությամբ գրավեց Երևանի բերդը: Ռուսական լեռնաորթները մեծ ավերակներ գործեցին բեր-

դում: Պատմվում է, որ մի ռումբ ծակել անցել է բերդի խոշոր մեջլիդի զմբեթը, որի տակ ապաստանել էին հազարավոր պաշարյալներ:

Ինչպես Երևանի բերդից, նույնպես և սարդարի շքեղ պալատից շատ քիչ բան է մնացել այժմ՝ միայն դրանց դժգույն պատմությունը:

Այդ պալատի պատուհանների առջև նրստած, պարսիկ սարդարները հաճույք էին զգում գնդակահարելով Զանգու գետն անցնող մարդկանց և կենդանիների:

Այդ միեռնույն պատուհաններից Երևանի կառավարիչ սարդարները դիտում էին խանության ենթակա երկրներից հասնող քաղաքականները, որոնք հարստացնում էին իրենց գանձատունը ոսկիներով, իսկ կանանոցը... հայ և վրացի գեղեցկուհիներով:

Երևանի կավաշեն բերդը, պալատը, պարսիկ սարդարները, ավանակով Զանգու գետն անցնող գյուղացիները այժմ պատմության են պատկանում: Հարստահարող այդ խաների պալատի տեղ այժմ հանրագույն շենքեր են բարձրացել, աշխատավոր փողովորդի համար հանգստավետ այգիներ և պուրակներ են տարածվել: Անցյալում սարդարների ծաղր ու ծանակին ենթակա գյուղացիներն այժմ, տիրապետելով տեխնիկայի տարբեր ճյուղերին, հաստատ քայլերով առաջանում են դեպի լուսավոր ապագա: Այժմ պարսիկ կանանոցի մեջ կալանավոր հեծեծող աղջիկներ չկան այլևս. ամենուրեք դու տեսնում ես հրաբիր, սևաչյա, ամրաբազուկ, դերադանցորեն դաստիարակված աղջիկներ, որոնք տղամարդկանց համահավասար իրավունքներով աշխատում են հարթել Սովետական երկրի վերելքի դեմ հարուցվելիք ամեն տեսակի արգելքները:

(Շարունակելի)